Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Վերին Բազմաբերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի /առաջին դասարան/ 17 դասաժամ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանմշակված հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը նյութաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3-4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
3. Անձը հավաստող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն /առկայության դեպքում/,
5. Ինքնակենսագրություն /Ձև 5/,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիներ՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/ առկայության դեպքում/,
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն /մասնակցած լինելու դեպքում/:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարությունը հրապարակելու օրվանից մինչև մարտի 14-ըներառյալ, ամեն օր ժամը 10:00 -15:00 բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մարտի 21-ին -ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի ,Վերին Բազմաբերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն ՀՀ Արագածոտնի մարզ գ. Վերին Բազմաբերդ, փողոց 8, փակուղի 1, շենք 2:

Տեղեկությունների համար զանգահարել 099 05 12 11 հեռախոսահամարով:

«Վերին Բազմաբերդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինություն